ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն Ո... -Լ

ք.Երևան «15» 05 2024թ

№ 1296-Լ

2024 ԹՎԱԿԱՆԻ՝ ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 2-ի N 138-Լ որոշման N 2 Հավելվածի 5-րդ կետի 5.1 և 5.2 ենթակետերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեբերի 28-ի N 2323-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

հրամայում եմ.

1. Հաստատել՝

1) 2024 թվականի՝ տեքստիլ ոլորտում կայունության զարգացման գործընթացներին պետական աջակցության տրամադրման միջոցառումը՝ համաձայն N1 հավելվածի:

2) 2024 թվականի՝ տեքստիլ ոլորտում կայունության զարգացման գործընթացներին պետական աջակցության տրամադրման միջոցառման իրականացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) միջոցառման շրջանակներում փոխհատուցման տրամադրման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
«15» 05 2024թ № 1296-Ա

ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Միջոցառման նպատակներն են.

   1) խթանել տեքստիլ արդյունաբերության ոլորտի մրցունակության բարձրացումը,
   2) նպաստել հայկական (տեղական) արտադրանքի որակի բարելավմանը՝ ապահովելով հասանելիությունը միջազգային սերտիֆիկացման համակարգերին,
   3) խրախուսել հայ արտադրողին համապատասխանել միջազգային չափորոշիչներին,
   4) նպաստել նոր, ավելի գրավիչ շուկաներ մուտք գործելուն,
   5) նպաստել հայկական (տեղական) արտադրանքի հանդեպ սպառողի վստահության բարձրացմանը,
   6) նպաստել ոլորտի կայունության զարգացմանը:

2. Միջոցառման իմաստով **ոլորտ** է համարվում՝ Հայաստանի Հանրապետության էկոնոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N562-Ն հրամանով հաստատված C(UH)13 «Մանածագործական արտադրատեսակների արտադրություն» և C(UH)14 «Հագուստի արտադրություն» դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեության տեսակները ներառող ոլորտը:

3. Միջոցառմամբ նախատեսվում է ունենալ աջակցության **երկու ուղղություն**.

   1) Ոլորտին հատուկ հավաստագրի ստացման **խորհրդատվական ծառայությունների աջակցություն,**

2) Ոլորտին հատուկ **հավաստագրերի ձեռք բերման աջակցություն**,

4. Միջոցառման ակնկալվող **արդյունքները**.

1) արտահանման ծավալների աճ,
2) արտահանման շուկայի դիվերսիֆիկացում,
3) մրցունակ և որակյալ արտադրանքի ծավալների աճ,
4) ոլորտում բիզնես գործընթացների բարելավում,
5) միջազգային շուկաներում վստահության և ճանաչելության բարձրացում:

2. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

5. Միջոցառման շրջանակներում **շահառու** է համարվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային այն կազմակերպությունը, որի ծրագրին դիմելու օրվան նախորդող օրացուցային տարվա շրջանառության առնվազն 80 %-ը ձևավորվել է՝ Հայաստանի Հանրապետության էկոնոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N562-Ն հրամանով հաստատված C(UH)13 «Մանածագործական արտադրատեսակների արտադրություն» և C(UH)14 «Հագուստի արտադրություն» դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեության տեսակներից,

6. Շահառուն հայտը ներկայացնելու օրվան նախորդող օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորություններ չպետք է ունենա:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

7. **Ոլորտին հատուկ հավաստագրերի ստացման խորհրդատվական ծառայությունների աջակցություն**.

1) Փոխհատուցել ISO-ի կամ ոլորտին հատուկ այլ հավաստագրերի համար ստացված խորհրդատվական ծառայության ծախսերի 50%-ը, բայց ոչ ավել քան 1 500 000 դրամ, եթե առկա են հետևյալ բոլոր պայմանները.

ա) խորհրդատվական ծառայությունը մատուցվել է ՏՀԶԿ (OECD) երկրներում գրանցված կազմակերպության (այսուհետ՝ խորհրդատվական կազմակերպություն) կողմից,

բ) խորհրդատվական կազմակերպության՝ 2024 թվականի հունվարի 1-ին նախորդող տարվա շրջանառությունը եղել է ոչ պակաս, քան՝ 100 մլն դրամ, որը հավաստվում է N2 Հավելվածի կարգի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված տեղեկանքի հիման վրա,

գ) խորհրդատվական ծառայությունը մատուցվել է սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2024 թվականի նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում:

8. **Ոլորտին հատուկ հավաստագրերի ձեռք բերման աջակցություն.**

1) Փոխհատուցում տրամադրել այն հավաստագրերի ձեռքբերման ծախսերի 50%-ի չափով, բայց ոչ ավել քան 1 000 000 ՀՀ դրամ, որոնք ձեռք են բերվել սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2024 թվականի նոյեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում: Սույն կետի իմաստով հավաստագրերը հետևյալն են.

ա) ISO հավաստագիր,

բ) CEN հավաստագիր,

գ) ECO հավաստագիր:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
«15» 05 2024թ No 1296-Ա

ԿԱՐԳ

2024 ԹՎԱԿԱՆԻ՝ ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Աջակցություն ստանալու նպատակով դիմողները պարտավոր են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) secretariat@mineconomy.am էլեկտրոնային հասցեով ներկայացնել՝

1) դիմում-հայտ՝ համաձայն սույն հավելվածով սահմանված ձևի,
2) անձը հաստատող փաստաթղթի պատճեն,
3) տեղեկանք՝ հայտը ներկայացնելու օրվան նախորդող օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ,
4) դիմողի գրավոր համաձայնությունը, որպեսզի նախարարությունը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից (այսուհետ՝ ՊԵԿ) ստանա դիմողի վերաբերյալ սույն միջոցառման շրջանակներում պահանջվող տեղեկատվությունը,
5) խորհրդատվական կազմակերպության կողմից տրամադրված տեղեկանք գրանցման վայրի և նախորդող տարվա շրջանառության վերաբերյալ (*խորհրդատվական ծառայությունների աջակցության դեպքում*),
6) ստացված խորհրդատվական ծառայությունների կամ հավաստագրերի վերաբերյալ հաշիվ-ապրանքագրի պատճեն, որը պետք է պարունակի նշում, որ խորհրդատվական ծառայությունը տրամադրվել կամ հավաստագիրը ձեռք է բերվել Հայաստանի Հանրապետության էկոնոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N562-Ն հրամանով հաստատված C(ՍԻ)13 «Մանածագործական արտադրատեսակների արտադրություն» և C(ՍԻ)14 «Հագուստի արտադրություն»

դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեության տեսակների համար,

7) ձեռք բերված ISO, CEN կամ ECO հավաստագրի պատճեն *(հավաստագրերի ձեռք բերման աջակցման դեպքում)*:

2. Նախարարությունը դիմում-հայտը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ՊԵԿ պաշտոնական գրությամբ ներկայացնում է հարցում՝ շահառուի եկամուտների գծով հարկային պարտավորությունների և ձևավորված շրջանառության տեղեկատվության վերաբերյալ:
3. Սույն կարգի 2-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը ստանալու և միջոցառման պահանջները բավարարելու դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, նախարարության և շահառուի միջև կնքվում է աջակցության տրամադրման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր): Աջակցությունը տրամադրվում է պայմանագրի կնքման և տվյալ տարվա համար նախատեսված ֆինանսական միջոցների առկայության պարագայում:
4. Կնքված պայմանագրով սահմանված գումարը փոխանցվում է պայմանագրում նշված հաշվարկային հաշվին՝ շահառուի հետ պայմանագիրը ստորագրելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:
5. Դիմողի հետ չի կնքվում պայմանագիր, եթե դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերով տրամադրված տեղեկությունները թերի են կամ չեն համապատասխանում միջոցառման պահանջներին:
6. Միջոցառման պահանջներին չհամապատասխանող թերի կամ ոչ ամբողջական փաստաթղթերի ներկայացման հիմքով պայմանագիր չկնքելը չի բացառում դիմողի կողմից՝ սույն կարգի 1-ին կետով սահմանված, նոր դիմում-հայտ ներկայացնելը:
7. Պայմանագիր չկնքելու վերաբերյալ դիմողին տեղեկացումը կատարվում է դիմում-հայտում նշված էլեկտրոնային հասցեի միջոցով՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:
8. Շահառուն կարող է ստանալ փոխհատուցում սույն միջոցառման աջակցության երկու ուղղություններով, ընդ որում՝ յուրաքանչյուր աջակցության ուղղության մասով միայն մեկ անգամ:

9. Սույն ծրագրի հիման վրա դիմումները կարող են ներկայացվել մինչև 2024 թվականի նոյեմբերի 15-ը:

Ձև

Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարին
_____-ից

(Դիմողի անուն,ազգանուն, պաշտոն)

_____

(Կազմակերպության անվանում, գտնվելու վայր, հեռախոս, էլ. հասցե)

ՀՎՀՀ՝_____

«__.__.2024»

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ

2024 ԹՎԱԿԱՆԻ՝ ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Սույն դիմում-հայտով խնդրում եմ տրամադրել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի «__.__._____» N__-Լ հրամանով հաստատված «2024 թվականի՝ տեքստիլ ոլորտում կայունության զարգացման գործընթացներին պետական աջակցության միջոցառման» շրջանակներում փոխհատուցում:

☐ Ոլորտին հատուկ հավաստագրի ստացման **խորհրդատվական ծառայությունների աջակցություն**

☐ Ոլորտին հատուկ **հավաստագրերի ձեռք բերման աջակցություն**

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը, որպեսզի Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստանա դիմող կազմակերպության հարկային պարտավորությունների և ձևավորված շրջանառության վերաբերյալ տեղեկատվություն:

Կից ներկայացնում եմ՝

1. անձը հաստատող փաստաթղթի պատճեն,

2. տեղեկանք՝ հայտը ներկայացնելու օրվան նախորդող օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ
3. խորհրդատվական կազմակերպության կողմից տրամադրված տեղեկանք գրանցման վայրի և նախորդող տարվա շրջանառության վերաբերյալ (*խորհրդատվական ծառայությունների աջակցության դեպքում),*
4. ստացված խորհրդատվական ծառայությունների կամ հավաստագրերի վերաբերյալ հաշիվ-ապրանքագրի պատճեն, որը պետք է պարունակի նշում, որ խորհրդատվական ծառայությունը տրամադրվել կամ հավաստագիրը ձեռք է բերվել Հայաստանի Հանրապետության էկոնոնոմիկայի նախարարի 2013թ. սեպտեմբերի 19-ի N562-Ն հրամանով հաստատված C(UH)13 «Մանածագործական արտադրատեսակների արտադրություն» և C(UH)14 «Հագուստի արտադրություն» դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեության տեսակների համար:
5. ձեռք բերված ISO, CEN կամ ECO հավաստագրի պատճեն*: (հավաստագրերի ձեռք բերման աջակցման դեպքում)*

Դիմող՝ _____

(անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոն, ստորագրություն)

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
«15» 05 2024թ N 1296-Լ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N-__

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ք.Երևան __._____. 2024թ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար _____-ի, ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____ (նշել անվանումը՝ _____) (այսուհետ՝ շահառու), ի դեմս _____, ով գործում է ընկերության կանոնադրության/պետական գրանցման հիման վրա, մյուս կողմից, այսուհետ երկուսը միասին կողմեր, հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի «2024 թվականի՝ տեքստիլ ոլորտում կայունության զարգացման գործընթացներին պետական աջակցության տրամադրման միջոցառումը հաստատելու մասին» N__-Լ հրամանը (այսուհետ՝ հրաման), Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեբերի 28-ի N 2323-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով նախարարությունը պարտավորվում է 2024 թվականի՝ տեքստիլ ոլորտում կայունության զարգացման գործընթացներին պետական աջակցության տրամադրման միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) շրջանակներում շահառուին տրամադրել փոխհատուցում.

☐ ոլորտին հատուկ հավաստագրի ստացման **խորհրդատվական ծառայությունների աջակցություն**

☐ ոլորտին հատուկ **հավաստագրերի ձեռք բերման աջակցություն**

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Նախարարությունը պարտավոր է հրամանով սահմանված կարգով և ժամկետներում շահառուի հաշվարկային հաշվին փոխանցել փոխհատուցման գումարը:

2.2. Շահառուն իրավունք ունի նախարարությունից պահանջել փոխատուցում՝ հրամանով սահմանված կարգով և ժամկետներում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի շրջանակներում փոխհատուցման չափը որոշվում է համաձայն շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերի:

3.2. Նախարարությունը վճարման ենթակա գումարը, որը կազմում է _____ դրամ, շահառուին փոխանցում է պայմանագրում նշված հաշվարկային հաշվին՝ անկանխիկ եղանակով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Պայմանագրի պահանջների խախտման համար կողմերը կրում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

5.2. Կողմերի միջև պայմանագրի հիման վրա ծագող այն բոլոր հարաբերությունները, որոնք կարգավորված չեն պայմանագրով, կարգավորվում են հրամանով:

5.3. Պայմանագրի առնչությամբ ծագած վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սույն Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, հայերեն լեզվով, __ էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

6.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն Հ/Հ ՀՎՀՀ 02698604 Գլխավոր քարտուղար	**Շահառու** Հասցե՝ Հ/Հ ՀՎՀՀ
---	---
Կ.Տ.	